

## ՏԵԽՆՈՊԱՐԿԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

### Մերի ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ

ՀՊՏՀ մագիստրանտ, ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության  
ինտիտուտի կրտսեր գիտաշխատող

Բանալի բառեր. Գյուճար տեխնոպարկ, ինովացիա, տեղեկատվական  
տեխնոլոգիաների կենտրոն, կրթություն, ռազմավարություն

Տնտեսության կառուցվածքի կատարելագործումը, արդյունավետ նորարարական գործընթացների ինտենսիվացումը և բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկումը արդի պայմաններում յուրաքանչյուր պետության ռազմավարական առաջնահերթությունների շարքում են: Նմանապես ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարության կարևոր բաղադրիչ նույնպես հանդիսանում է տեխնոպարկերի ստեղծման և գործունեության արդյունավետ մեխանիզմի մշակումը, քանի որ դրանց շնորհիվ հնարավոր կլինի ակտիվացնել բարձր տեխնոլոգիական ոլորտներին ուղղորդված ներդրումները, վերականգնել «գիտություն-արտադրություն-շուկա» շղթայական գործընթացը, արագ զարգացնել ինովացիոն մեխանիզմներն ու ենթակառուցվածքները՝ հատկապես բարձր գործազրկություն ունեցող տարածքներում:

ՀՀ-ում տեխնոպարկերի ստեղծման գաղափարները, որոնք տարիներ առաջ դեռևս սաղմային վիճակում էին, իսկ դրանցից ակնկալիքներն՝ անորոշ ու անիրատեսական, այսօր արդեն իրողություն են: Այդ ուղղությամբ զգալի աշխատանքներ են իրականացվել ենթակառուցվածքների ձևավորման, ինկուբացիոն տարածքների ձեռքբերման, նոր գաղափարների գեներացման ուղղությամբ:

Ակնկալվում է, որ տեխնոպարկերի զարգացումը ՀՀ-ում կհանգեցնի ազգային գիտական (այդ թվում նաև՝ սոցիալական, մշակութային և ճարտարագիտական) ներուժի կենտրոնացմանը, նոր գիտական ներուժի առաջացմանը, բարձր տեխնոլոգիական ու գիտատեխնիկական մշակումների իրականացմանը, գործարարության զարգացմանը և համաշխարհային շուկայում թողարկված արտադրանքի մրցունակության բարձրացմանը: Միաժամանակ տեխնոպարկերի ստեղծումը ենթադրում է նոր աշխատատեղերի ստեղծում, օտարերկրյա ներդրումների ներգրավում, բնակչության կենսամակարդակի բարելավում, իրնչպես նաև տնտեսության և հասարակական բարեկեցության ընդհանուր աճի ապահովում, ինչով պայմանավորված է տեխնոպարկերի ձևավորման և հետագա զարգացման հիմնախնդիրները Հայաստանում հատկապես արդիական են և ուշադրության արժանի:

ՀՀ-ում տեխնոպարկերի ձևավորման և հետագա զարգացման հիմնական առանձնահատկությունները դեռևս լիարժեք չեն ուսումնասիրվել, պայմանավորված այդ ուղղությունը կոնկրետ գործողությունների նախաձեռնության համեմատաբար կարճ ժամանակահատվածով: Սակայն դրական միտումներն ակնհայտ են: Հարկ է հիշել նաև, որ տեխնոպարկերը հեռանկարային կառույցներ են և դրանց արդյունավետության մասին եզրակացությունները ներկայում չեն կարող կատարվել:

Այնուամենայնիվ, կարելի է խոսել այն նախադրյալների մասին, որոնք կարող են ապահովել տեխնոպարկերի գործունեության հաջողությունները:

Տարածքային համաչափ զարգացման և երկրի ընդհանուր մրցունակության բարձրացման համար կարևորվում է ՀՀ կառավարության կողմից 2008 թվականին նախաձեռնված Գյումրու տեխնոպարկերի գործունեության իրականացման ծրագիրը<sup>1</sup>, որի նպատակն է նպաստել Գյումրի քաղաքի զարգացմանը՝ վերածելով այն ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական գոտու, որտեղ ներկայացված կլինեն բարձր տեխնոլոգիաներ կիրառող կազմակերպությունները, խոշոր կրթօջախներն ու գիտահետազոտական կենտրոնները: Ծրագիրն էական նշանակություն ունի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, փոքր և միջին բիզնեսի խթանման, նոր աշխատատեղերի ստեղծման և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից, այն կխթանի Գյումրի քաղաքում տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարագիտության ճյուղերի զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով արտադրական գործընթացներում ընդգրկելու Շիրակի մարզի բարձր որակավորման մասնագետներին:

Գյումրին տեխնոքաղաքի վերակառուցելու ծրագիրը<sup>2</sup> կառավարության հավանության արժանացավ 2008թ.հունիսի 12-ի թիվ 23 որոշմամբ: Ծրագիրը հետապնդում է հետևյալ նպատակները՝

- գիտակրթական, գործարար և պետական հատվածների փոխշահավետ համագործակցության զարգացում;
- գիտական մշակումների առևտրականցում;
- արտադրական և գիտական սուբյեկտների մտավոր, տեղեկատվական, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների ինտեգրում և ակտիվացում;

---

<sup>1</sup> «Գյումրի տեխնոպարկի ծրագրի վերաբերյալ» տեղեկանք

<sup>2</sup> Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի պաշտոնական կայք <http://gedf.am/>

- շուկայական տնտեսության այնպիսի մեխանիզմների ձևավորում, որոնք կխթանեն մրցունակ ապրանքների արտադրությանը;
- առաջադեմ տեխնոլոգիաների ձեռքբերման աջակցման նպատակով ներդրումային միջոցների ներգրավում;
- գիտատեխնիկական, մտավոր, կադրային ներուժի պահպանման և զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում:

Գյուճարու տեխնոպարկը հանդիսանում է Գյուճարու տեխնոքաղաքի հիմնական բաղադրիչներից մեկը: Գյուճարու տեխնոպարկի ծրագիրը կապահովի բարձրակարգ ենթակառուցվածքի ստեղծումը, որոնք կօժանդակեն Գյուճարի քաղաքի, իսկ հետագայում նաև ՀՀ Շիրակի մարզի տնտեսական վերելքին:

Գյուճարու տեխնոպարկի զարգացման ծրագիրն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով՝ գործարարության խթանման ծրագիր և կրթական ծրագիր:

Հատկանշական է այն փաստը, որ վերլուծելով ՀՀ-ում 2007-2014թթ մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակ բաշխվածության և գիտական հետազոտություններ կատարողների դինամիկական պարզ է դառնում, որ առկա է հետազոտող անձնակազմի ծերացում: Մասնավորապես գիտության և տեխնոլոգիաների ոլորտում հետազոտողների 65% գրեթե 50 տարեկան և ավելի են և նրանց թիվը չի համալրվում նոր սերնդի հաշվին: Այդ առումով նշանակալի է Գյուճարու Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում երիտասարդ կադրերի համալրումը: Կենտրոնը կազմակերպում է երկամսյա դասընթացներ՝ երիտասարդներին հանձնելով ավարտական վկայականներ: Բարձր առաջադիմություն ունեցող երիտասարդներին հնարավորություն է ընձեռվում ներկայանալ նորարարական գաղափարներով ապագայում դրանք կյանքի կոչելու նպատակով:

ԳՏՏԿ-ի կարևորագույն ձեռքբերումներից առանձնացնենք մի քանիսը<sup>3</sup>՝

1. 2012 թվականին ԳՏՏԿ-ի Սոբայլ տեխնոլոգիաներ բաժնի ուսանողների կողմից ստեղծվեց ժեստերի լեզվի բառարանը: Հայ-անգլերեն բառարանը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ընտրված բառի թարգմանությունը ստանալ տվյալ երկու լեզուներով, դրա հետ մեկտեղ տեսնել տվյալ թարգմանության ժեստերի պատկերները: Ծրագիրը հնարավորություն է տալիս հեշտացնել հատուկ կարիքներով մարդկանց միջև շփումը:

2. 2014 թվականին ԳՏՏԿ-ն սկսեց իր համագործակցությունը ամերիկյան «Legacy» ՄՊԸ-ի հետ: Տվյալ ժամանակահատվածում Ջիմեք Սոլյու-

---

<sup>3</sup> <http://gitc.am/gitc/>

սշնս<sup>4</sup> թիմը ստեղծեց «Legacy» մոբայլ հավելվածը : Ծրագիրը թույլ է տալիս ստանալ համապատասխան ծանուցումներ և գրել մեկնաբանություններ: Համագործակցությունը ԳՏՏԿ-ին օգնում է ամրապնդել դիրքերը արտերկրի շուկայում և հիմք է հանդիսանում ամուր մոբայլ ծրագրավորման թիմ հիմնելուն:

3. 2015 թվականի ապրիլին ԳՏՏԿ-ն Մայքրոսոֆթ Ինովացիոն կենտրոնի հետ համատեղ իրականացրեց «C/C++ ծրագրավորման լեզուների հիմունքներ» սեմինարը, որի նպատակը նոր գաղափարների բացահայտումն ու իրականացումն է:

4. 2015 թվականի մայիսին ԳՏՏԿ-ում կայացավ Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա օլիմպիադան: Նշենք, որ 2006թ.-ի սեպտեմբերից «Սինոփսիս Արմենիա» ընկերությունը կազմակերպում է օլիմպիադա Հայաստանում: Այն նպատակ ունի խթանել միկրոէլեկտրոնիկայի զարգացումը ՀՀ-ում և ընթացքում հայնաբերել ու աջակցել մասնակից երիտասարդներին:

Վերլուծելով Գյումրու տեխնոպարկի ռազմավարական քայլերն ու ուսումնասիրությունների արդյունքները ներկայացնենք ՀՀ-ում առկա որոշ բացթողումներ և թերություններ: Գործարար հատվածում բացակայում են ֆինանսական հնարավորություններ, չկան մասնագիտացված ծառայություններ, հեռահաղորդակցության ծառայությունների որակը ցածր է: Կրթական ոլորտում՝ տարածքային պայմանները անբավարար են, հմտությունները հնացած են:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում տեխնոպարկերի համար արդեն գործում են արտոնությունների և խթանման ծրագրերի համակարգ: Սակայն այս համակարգը արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ են հստակ ծրագրեր, հետևողականություն, պատրաստակամություն, պատասխանատվության բարձր աստիճան: Հակառակ դեպքում ջանքերը ապարդյուն կանցնեն և կգրանցվեն ձախողումներ:

---

<sup>4</sup> Ընկերությունը մասնագիտացված է տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման ոլորտում

### **Մերի ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ**

#### **Տեխնոպարկերի զարգացման նախադրյալները ՀՀ-ում**

*Բանալի բառեր. Գյումրու տեխնոպարկ, ինովացիա, տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն, կրթություն, ռազմավարություն*

Հոդվածի հիմնական նպատակը ՀՀ-ում տեխնոպարկերի ձևավորման և զարգացման նախադրյալների վերլուծումն է: Ինչպես նաև դրանց գործունեության առանձնահատկությունների, զարգացման հնարավորությունների, հեռանկարային ուղղությունների և հիմնախնդիրների բացահայտումն է:

### **Мери ГУБАСАРЯН**

#### **Предпосылки развития технопарков в Армении**

*Ключевые слова: Технопарк, инновации, центр информационных технологий, стратегия*

Основная цель статьи формирование и развитие технопарков в Армении. А также особенности их деятельности, возможности исследования, выявление основных проблем и перспективы их дальнейшего развития.

### **Mery GHUBASARYAN**

#### **The conditions of development of technoparks in the Armenia**

*Keywords Technopark, innovation, center of information and technology, education, strategy*

The main purpose of the article is the formation and development of technology parks in Armenia. And also features of their activity, research opportunities and the prospects for their further development. Issues related to Gyumri technopark, innovations, centers of information and technology, as well as education and strategy are being discussed in this article.